ArmLur.am

I SSN 1829-2763

22164

9 771829 276006

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

# Ժողովուրդ

16 նոյեմբերի չորեքշաբթի 2022
տպագրության ԺԱ տարի

164
(2644)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

# ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 135



Վարչապետ Նիկոլ Փաշինյանը 2022 թվականի հունիսի 27-ին առցանց ասուլիս է ունեցել եւ կրկին անդրադառնալով ղարաբաղյան հակամարտության կարգավորման թեմային՝ արել մանիպուլատիվ հայտարարություններ: «Ժողովուրդ» օրաթերթը ներկայացնում է դրանցից մեկը. ասուլիսի ժամանակ վարչապետն անդրադարձավ Մադրիդյան սկզբունքներին եւ հայտարարեց. «Երբ որ միջազգային հանրությունով, ըստ էության, դու արձանագրում ես, որ Ղարաբաղի կարգավիճակը պիտի որոշվի ապագայում կողմերի համաձայնությամբ, առանց սահմանափակումների, անորոշ տեղում, անորոշ ժամկետներով, անորոշ մասնակիցներով տեղի ունենալիք հանրաքվեով, դու՝ հայկական կողմ, ընդունում ես, որ 1991 թվականի դեկտեմբերի 10-ին տեղի ունեցած հանրաքվեն ոչ մի բան չի որոշելու»,- հայտարարեց Փաշինյանը: Նա այսպիսի հայտարարություն մեկ անգամ չէ, որ անում է: Օրինակ՝ նա նմանատիպ հայտարարություն արել էր 2021 թվականի օգոստոսի 24-ին եւ դեկտեմբերի 8-ին՝ ասելով, թե երբեք հստակ չի եղել՝ Ղարաբաղի կարգավիճակի վերաբերյալ հանրաքվեն որ տարածքում է տեղի ունենալու: Նրա այս խոսքերը, սակայն, չեն համապատասխանում իրականությանը, ավելին՝ եւ՛ Մադրիդյան, եւ՛ Կազանյան փաստաթղթերում նշվել է, որ հանրաքվեն, այսինքն՝ պլեբիսցիտը, պետք է անցկացվի ԼՂԻՄ-ի բնակչության շրջանում՝ այնպիսի ազգային (էթնիկ) համամասնությամբ, ինչպիսին եղել է մինչեւ ղարաբաղյան հակամարտության սկիզբը՝ 1988 թվականը: Ադրբեջանը ընդդիմանում էր հանրաքվեին, քանի որ 1988-ի համամասնությամբ ԼՂԻՄ-ի բնակչության գերակշիռ մեծամասնությունը՝ 76-77 տոկոսը, հայեր են եղել: Ստացվում է՝ Նիկոլ Փաշինյանի՝ անորոշ տեղում, անորոշ ժամկետներով, անորոշ մասնակիցներով հանրաքվեի մասին հայտարարությունը չի համապատասխանում իրականությանը, եւ նա կրկին խաբել է ՀՀ հպարտ եւ արժանապատիվ քաղաքացիներին:



Իշխանական «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վարչության կեղծված ընտրությունները պատգամավորների համար միմյանց դեմ բողոքներ գրելու առիթ են դարձել: «Ժողովուրդ» օրաթերթն իր լավատեղյակ աղբյուրներից պարզեց, որ օրերս ԱԺ ՔՊ-ական պատգամավորներից մեկը ՀՀ ոստիկանությունում դիմում է գրել՝ խնդրելով ուժային այդ կառույցից պարզել, թե ով է մամուլում հայտնված հրապարակումների աղբյուրը: Կազմակերպված հանցավորությունների դեմ պայքարի, այսպես ասած, 6-րդ վարչությանը տրված դիմումում, իհարկե, անուններ չեն գրվել, սակայն, նշվել է, որ անհրաժեշտ է շտապ պարզել, թե ՔՊ վարչության կեղծված ընտրությունների թեման ինչպես է հայտնվել մամուլում: Իսկ արդեն մտերմիկ զրույցի ժամանակ, ՔՊ պատգամավորը, նրան ուղեկցողները, ոստիկանության աշխատակիցներին հայտնել են, թե իրենք կասկածներ ունեն, որ մամուլին գաղտնի տեղեկություններ է տվել՝ մի կերպ ՔՊ վարչության անդամ դարձած պատգամավոր Արսեն Թորոսյանը: Ասել է թե՝ տխրահռչակ նախարար Արսեն Թորոսյանն է լրագրողների նյութի գաղտնի աղբյուրը: Եվ հիմա ՀՀ ոստիկանության նախկին 6-րդ վարչության աշխատակիցները լրատվամիջոցների աղբյուրներին են փնտրում: Առաջիկայում «Ժողովուրդ» օրաթերթը կհրապարակի, թե ով է հաղորդում տվող պատգամավորը եւ որ լրատվամիջոցների անուններն է տվել դիմումի մեջ: Հիշեցնենք, որ հոկտեմբերի 29-ին կայացած ՔՊ վարչության ընտրություններն անցել են խայտառակ ընտրակեղծիքներով: Սա արել են այն մարդիկ եւ այն քաղաքական լիդերը՝ ի դեմս Նիկոլ Փաշինյանի, որ իշխանության եկան ընտրակեղծիքները մերժելով:



Հայաստանի արտաքին քաղաքականությանն առնչվող հիմնական հարցերը ՀՀ արտգործնախարար Արարատ Միրզոյանի խորհրդական Վահան Կոստանյանն է որոշում: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ 28-ամյա Կոստանյանն է հենց արտոնում ՀՀ արտաքին քաղաքականության հետ կապվող բոլոր տեքստերը, այդ թվում՝ թե՛ միջազգային գործընկերներին ուղղված արձագանքները, թե՛ մամուլի առանձին հաղորդագրությունները: «Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի իշխանական պատգամավորները, արտգործնախարարության աշխատակիցներն ու ընդհուպ՝ վարչապետ Փաշինյանի աշխատակազմը իրենց հայտարարությունները, տեքստերը այդ քննարկումների համար նախատեսված խմբում են տեղադրում, որ Կոստանյան Վահանն աչքի տակ անցկացնի, իր համաձայնությունը տա, ապա նոր հրապարակվեն դրանք»,- ասաց ՔՊ-ամերձ մեր աղբյուրը: Հետաքրքիր է՝ ում մտքով է անցել ՀՀ արտաքին քաղաքականության վեկտորը որոշելու վճռորոշ հարցը թողնել գիտական թեզ պաշտպանելու պատրվակով բանակից 3 տարվա տարկետում ստացած, այնուհետեւ ասպիրատուրայից դուրս եկած ու բանակից բոլորովին այլ հիմքով ազատված Կոստանյանին. նա ո՛չ դիվանագետի կամ բանակցողի փորձառություն, ո՛չ էլ քաղաքական ցցուն ու արժանահավատ կենսագրություն ունի:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանը կոմիտեում կադրային ջարդ է սկսել եւ պաշտոնից ազատում է քննիչների, որոնք հերթով կոմիտեի նախագահի որոշումների դեմ դատարան հայցեր են ներկայացնում: Մեզ հայտնի դարձավ, որ Հակակոռուպցիոն կոմիտեի քննչական երրորդ վարչության հատկապես կարեւոր գործերով ավագ քննիչ Սիմոն Հարությունյանը դիմել է Վարչական դատարան՝ ընդդեմ կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանի որոշման: Հարությունյանը Վարչական դատարան ներկայացրած հայցով պահանջում է, որ դատարանը ստիպի կոմիտեի նախագահին իր՝ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնների համալրման նպատակով անցկացվող մրցույթի հարցազրույցի փուլը հաղթահարելու եւ մրցույթում հաղթող ճանաչվելու առկայությունը ճանաչվի, որպես հետեւանք ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանի՝ իրեն աշխատանքից ազատելու հրամանն անվավեր ճանաչվի ու, դեռ ավելին, միջին աշխատավարձ՝ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար, սկսած 24.10.2022 թվականից, բռնագանձվի: Այսինքն՝ քաղաքացին անցել է պաշտոնի նշանակման համար անհրաժեշտ մրցույթի փուլը, ստացել ցանկալի «գնահատական», սակայն չի նշանակվում այդ պաշտոնում, եւ հիմա դատարանից պահանջում է ոչ միայն վերանշանակում, այլեւ հարկադիր պարապուրդի համար գումար:

ԸՆԴԻՄԱԴԻՐԸ՝ ԻՋԵՎԱՆԻՑ

# «ԵՍ ՄԻՇՏ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ԵՄ»

**Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության պատգամավոր Գառնիկ Դանիելյանը, որ այսօր ԱԺ նիստերի դահլիճում պատգամավորական երդում տվեց, ասում է, որ իր հայրենի Իջեւանում (այդտեղից է նաեւ վարչապետ Փաշինյանը) Նիկոլ Փաշինյանին թե՛ սատարողներ, թե՛ քննադատողներ կան: ArmLur.am-ը պատգամավորի հետ զրուցել է մի քանի ներքաղաքական հարցերի վերաբերյալ:**



**-Պարոն Դանիելյան, առաջին օրն եք խորհրդարանում, թեպետ ավելի վաղ եք ստացել պատգամավորական մանդատը, Ազգային Ժողովի դահլիճ մտնելիս ի՞նչ զգացողություններ եք ունեցել, ի՞նչ մտորումներով եք եկել:**

-Առանձնապես ինչ-որ զգացողություններ չունեմ: Նոր միջավայր, նոր մարդիկ, իսկ գալու նպատակն էլ հայրենիքին ծառայելն է:

**-Արդյո՞ք պատգամավորական գործունեությունը հոգեհարազատ է Ձեզ:**

-Այստեղ կան ընկերներ, որոնց վաղուց ծանոթ եմ, եւ նրանց հետ երկար տարիներ հարազատ եւ բարեկամական հարաբերություններ ունեմ:

**-Այսպես ասած՝ լավ ժամանակներ չեն Ձեզ բաժին հասել, ընդդիմությունը փողոցում էր, հիմա վերադարձել է խորհրդարան, իշխանությունն էլ ասում էր՝ ինչպես գնացին, այնպես էլ խելոք հետ եկան խորհրդարանական աշխատանքին. ի՞նչ կասեք այս մասին:**

-Ես ակտիվ ընդդիմադիր գործիչ եմ, մինչ այս պահը՝ առանց մանդատի, իսկ այժմ՝ մանդատով: Ինձ համար ոչինչ չի փոխվել: Ես պայքարել եմ փողոցում եւ պայքարելու եմ այստեղ: Պայքարելու եմ այն վստահության համար, որ մարդիկ մեզնից սպասում են, ամեն ինչ անելու եմ, որ խորհրդարանի ամբիոնից բարձրաձայնվեն այն խնդիրները, որոնք մարդկանց անհանգստացնում են: Ես ինքս Տավուշից եմ, եւ այնտեղ կան կենսական բազում հարցեր, որոնք թե՛ սոցիալական եւ թե՛ անվտանգային են, եւ ամբիոնը նման հարցերի համար չօգտագործելը չեմ կարծում, թե նպատակահարմար է: Մեզ համար առաջնայինը շեշտածս կարեւոր հարցերն են: Փողոցի պայքարի գաղափարը եւ Ազգային Ժողովի պայքարի գաղափարը պետք է համահունչ լինեն. մենք փողոցի պայքարը երբեք չենք դադարեցրել եւ չենք դադարեցնելու: Դրանք աննպատակ չեն. մեր բոլոր պայքարներն ունեն ստույգ նպատակ, որոնք ծրագրերի հետ առաջիկայում կներկայացնենք՝ ավելի թարմ մարտավարությամբ:

**-Եթե չեմ սխալվում, դուք այն քաղաքից եք, որտեղից է նաեւ վարչապետ Նիկոլ Փաշինյանը: Նիկոլ Փաշինյանի ընկալումները այնպիսին են, որ պետք է իրեն սատարեն իր համերկրացիները, բայց ինչպիսի՞ն է հասարակության ընկալումը:**

-Ես դրանով երբեք չեմ շարժվել: Ցանկացած հայ իմ համերկրացին է, տարբերություն չկա՝ որտեղից, բայց եթե իմ համերկրացին է, եւ սխալ է, չի նշանակում, որ պետք է սատարեմ իր ընտրությունը . դա սխալ կարծիք է:

**-Իսկ ինչպիսի՞ն է քաղաքացիների տրամադրվածությունը:**

-Տրամադրությունները տարբեր են: Մարդիկ կան, որոնք ավելի ռադիկալ են տրամադրված, մարդիկ էլ կան, որ համակերպվել են այս իրականության հետ եւ ապրում են այդ օրով ու իրենց ընտանեկան խնդիրներով: Մարդիկ կան, որ խնդիրներից խուսափելու համար անգամ իրենց կարծիքը չեն հայտնի, եւ կան այնպիսիները, որ բացառապես աջակցում են իշխանությանը: Ես ինքս պայքարել եմ՝ անգամ առանց մանդատի բացառապես, եւ եթե անգամ վաղը կամ մյուս օրը չունենամ մանդատ, կրկին պայքարելու եմ եւ ծառայելու եմ հայրենիքիս, ինչով որ կարող եմ:

*Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ*

ՍՏԵՐԻ ՇԱՐՔԻՑ

# ՄԱՆԻՊՈՒԼԱՏԻՎ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ Է ԱՐՎԵԼ

**«Ժողովուրդ» օրաթերթը այս տարվա մայիսից «Նիկոլ Փաշինյանը խաբել է» անվամբ շարք է սկսել, եւ ամեն օր օրաթերթի հերթական համարում ներկայացնում է վարչապետի՝ տարբեր ժամանակներում արված հայտարարություններն ու իրականությունը՝ ապացուցելով, որ նա տարբեր առիթներով մանիպուլացնում եւ խաբում է քաղաքացիներին: Ի լրացումն այս շարքի՝ արդեն ArmLur.am լրատվական կայքում սկսել ենք մեկ այլ շարք եւ ներկայացնում ենք արդեն Քաղաքացիական պայմանագիր կուսակցության անդամ պաշտոնյաների կողմից՝ տարբեր ժամանակներում ասված կեղծ հայտարարությունները, քանի որ նման գործելաոճ ամեն դեպքում միայն վարչապետը չէ, որ ունի: Նման գործելաոճով աչքի են ընկել ոչ միայն կոնկրետ անձինք, այլ նաեւ գերատեսչությունները՝ պաշտոնական հաղորդագրությունների միջոցով: Մանիպուլյացիաների եւ կեղծ տեղեկությունների հարցում բացարձակ առաջատարը թերեւս ՀՀ էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանն է, որն այդ առումով մշտապես գտնվում է հանրության ուշադրության կենտրոնում:**

2022 թվականի ապրիլի 6-ին «Առաջին ալիքի» «Հարցազրույց» հաղորդման ընթացքում Քերոբյանը մանիպուլատիվ հայտարարություն է արել, թե ընդդիմության կողմից առաջարկված նվազագույն աշխատավարձը 100 հազար դրամ դարձնելու նախագիծը մերժվեց, քանի որ բերելու էր նաեւ պաշտոնյաների աշխատավարձերի բարձրացման: Սակայն նա սխալվում է, քանի որ Հայաստանում պետական պաշտոնյաների աշխատավարձերը որեւէ կերպ կախված չեն նվազագույն աշխատավարձի չափից: Դրանք սահմանված են «Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքով: Ըստ այդմ՝ պետական պաշտոն զբաղեցնող անձի աշխատավարձը որոշվում է բազային աշխատավարձի եւ տվյալ պաշտոնի համար օրենքով սահմանված գործակցի արտադրյալով: Վահան Քերոբյանն այս տարվա սեպտեմբերի 12-ին հայտարարել էր, որ Հայաստանը տնտեսական ազատության ինդեքսով զբաղեցնում է 11-րդ հորիզոնականը. «Օգտվելով առիթից, ուզում եմ նշել, որ սեպտեմբերի 8-ին հրապարակված «Տնտեսական ազատության ինդեքսում» Հայաստանը 6 դիրքով բարելավել է իր տեղը եւ հիմա գտնվում է 11-րդ տեղում՝ ամբողջ աշխարհում տնտեսական ազատությունների ցուցանիշով»:

Սակայն նրան արձագանքեց «Լույս» հիմնադրամը՝ հայտնելով, որ թեեւ վերջիններս իրավացիորեն նշում են «Տնտեսական ազատության ինդեքսում» 165 երկրների շարքում 11-րդ տեղը զբաղեցնելու մասին, սակայն որեւէ կերպ չեն պարզաբանում, որ հրապարակված զեկույցը վերաբերում է 2020 թվականին: Ամիսներ շարունակ նախարարը խոստանում է հայկական կողմի գնած լաստանավերի գործարկումը: Նա վերջերս հայտարարեց, որ լաստանավերը ձեռք բերվել են, մնացել է միայն Վրաստանում Փոթիի օպերատոր հանդիսացող հոլանդական APM ընկերության թույլտվությունը, որին իրենք րոպե առ րոպե սպասում են: Սակայն դեռ նորություն չկա:

*ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*

## ՆՈՐ ԱՂՄՈՒԿ Է ՀԱՍՈՒՆԱՆՈՒՄ

Հայաստանի տարբեր կալանավայրերում պատիժ կրող դատապարտյալների շրջանում նոր աղմուկ է հասունանում: Խնդիրն առնչվում է քրեական դատավարության նոր օրենսգրքին: Կատարված փոփոխություններից հետո նոր օրենսգիրքը նախատեսում է նախկինում ազատազրկման դատապարտված անձանց դատավճիռներում ինչ-ինչ համապատասխանեցումներ անել, որոնք շատ դեպքերում պատժի կրճատում են նախատեսում: Օրինակ՝ ավազակային հարձակման եւ այլ հանցանքների համար ազատազրկման դատապարտված մի շարք անձինք քրեական դատավարության նոր օրենսգրքի փոփոխություններից հետո դիմել են դատարան, քանի որ ակնհայտ է եղել, որ այս փոփոխությունների արդյունքում իրենց պատժի չափը պետք է կրճատվեր կամ ինչ-որ չափով մեղմացում լիներ, սակայն դա չի կիրառվում: «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ միայն Արմավիրի մարզի դատարան են դիմել մոտ 200 դատապարտյալներ, որպեսզի կարողանան օրենքի փոփոխությունից կամ, այսպես ասած, բարեփոխումներից օգտվել: Դատարանը, սակայն, 200 հոգու դիմումն էլ մերժել է: Դատապարտյալները ահազանգում են՝ նշելով, թե բարեփոխման անվան տակ ինչ-ինչ փոփոխություններ են արվում, սակայն իրականում գործընթացը միֆ է, եւ իրենք չեն պատրաստվում լռել: «Ժողովուրդ» օրաթերթը ահազանգը ստացել է Արմավիրի դատարանի դժգոհներից, բայց խնդիրը վերաբերում է բոլոր դատապարտյալներին:

## ՀԱՎԱՍՏԻԱՑՆՈՒՄ Է ՓՈԽՔԱՂԱՔԱՊԵՏԸ

«Ջերմուկում այս պահին դրությունը նորմալ է: Մեզ մոտ կրակոցներ չեն հնչել, քաղաքում ձայներ չեն լսվել, իսկ դիրքերի մասով ոչինչ ասել չեմ կարող, տեղեկություններ չունեմ»: Այս մասին ArmLur.am-ի հետ զրույցում ասաց Ջերմուկի փոխքաղաքապետ Վարդան Սարգսյանը:

Մեր զրուցակցի խոսքով՝ Ջերմուկում քաղաքացիները փորձում են ապրել կյանքի բնականոն հունով, չնայած, որ մարդիկ դեռ վախեցած են:

Իսկ այն հարցին, թե քանի հանգստացող կա այս պահին Ջերմուկում մեր զրուցակիցն ասաց.« Այս պահին ավելի քան 100 հանգստացող կա, բայց լիահույս ենք, որ անվտանգության հարցերը կարգավորելուց հետո զբոսաշրջիկները եւ քաղաքացիները նորից կվերադառնան առողջարանային կնետրոններ»:

Նշենք, որ նոյեմբերի 14-ին՝ ժամը 20:00-ին, Ադրբեջանի ԶՈՒ ստորաբաժանումները տարբեր տրամաչափի հրաձգային զինատեսակներից կրակ են բացել հայ-ադրբեջանական սահմանի արեւելյան հատվածում տեղակայված հայկական դիրքերի ուղղությամբ:

Այս մասին հայտնում են ՊՆ տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունից՝նշելով, որ հայկական կողմը կորուստներ չունի:

Ժամը 22:00-ի դրությամբ իրադրությունն առաջնագծում հարաբերականորեն կայուն է:

## ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ 2023 թ. պետական բյուջեի նախագծով կանխատեսվում է՝ ՀՀ պետական պարտքը կկազմի 4 տրիլիոն 879 մլրդ դրամ, որը 2.1 %-ով պակաս է 2022թ. պետական բյուջեով կանխատեսվածից եւ 10.1 %-ով ավել է 2021 թ. փաստացի պարտքից: Միեւնույն ժամանակ ՀՀ արտաքին պետական պարտքը կկազմի 2 տրիլիոն 962 մլրդ դրամ, որը 7.2 %-ով պակաս է 2021թ. ցուցանիշից:

ՀՀ ներքին պետական պարտքը կկազմի 1 տրիլիոն 917 մլրդ դրամ. այն 28.4 %-ով ավել է 2022թ. հաստատվածից եւ 54.9 %-ով ավել է քան 2021թ. փաստացին էր: ՀՀ պետական պարտքը ԱՄՆ դոլարով արտահայտված կկազմի 12 միլիարդ 55.8 մլն , որը 15.4 %-ով ավել է 2022թ. հաստատվածից եւ 30.7 %-ով ավել է 2021թ. փաստացիից:

ՀՀ արտաքին պետական պարտքը կկազմի 7 մլրդ 319 մլն ԱՄՆ դոլար, որը համապատասխանում է 2022թ. համար հաստատված մակարդակին եւ 10.1 %-ով ավել է քան 2021թ. փաստացին էր, ՀՀ ներքին պետական պարտք կկազմի 4 մլրդ 736.8 մլն ԱՄՆ դոլար՝ 51.5 %-ով ավել 2022թ. հաստատվածից եւ 83.8 %-ով ավել՝ 2021թ. փաստացիից: ՀՀ կառավարության պարտքը կկազմի 4 տրիլիոն 625.2 մլրդ դրամ, որը 11.8 %-ով պակաս է քան ծրագրվել էր, 2.4 %-ով պակաս է 2022թ. հաստատվածից եւ 9.9 %-ով ավել է 2021թ. փաստացիից:

Միեւնույն ժամանակ ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտքը կկազմի 254 մլրդ դրամ, որը 3.7 %-ով ավել է քան կանխատեսվել էր 2022թ. համար եւ 15.5 %-ով ավել է 2021 թ. փաստացիից. դոլարային արտահայտությամբ այն կկազմի 10 մլրդ 595 մլն, որը 6.7 %-ով ավել է 2022թ. հաստատվածից եւ 20.8%-ով գերազանցում է 2021թ. փաստացիին:

## ԸՆԴԴԻՄԱԴԻՐՆԵՐԸ ԱՆՆԿԱՏ ՀԵՌԱՑԱՆ

Խորհրդարանական ընդդիմադիրները ԱԺ դահլիճ մտան աննկատ ու նույնքան աննկատ էլ հեռացան: Ինչպես ArmLur.am-ն այսօր տեղեկացրել էր, այսօր ընդդիմադիր երկու «Հայաստան» եւ «Պատիվ ունեմ» խմբակցությունները կմասնակցեն այսօրվանից մեկնարկող ԱԺ նստաշրջանին:

Նկատում ենք, որ ընդդիմադիրները կրկին դահլիճում չեն: ԱԺ ամբիոնին է մոտեցել ԲՏԱ փոխնախարար, ԱԺ ՔՊ-ական պատգամավոր Արուսյակ Ջուլհակյանի ամուսինը՝ Ավետ Պողոսյանը, այնուհետեւ ելույթ ունեցավ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը, սակայն ընդդիմադիրներից որեւէ մեկը ներկա չէր քննարկմանը:

Դրանից առաջ ՀՀ ՊՆ Սուրեն Պապիկյանն էր ԱԺ ամբիոնից ներկայացնում զինծառայողներին առնչվող նախագիծ, սակայն ընդդիմությունը կրկին ներկա չէր:

Ասել է թե՝ ընդդիմադիրները ներս մտան, գրանցվեցին, իշխանության ներկայացրած խորհրդարանական օրակարգին դեմ քվեարկեցին եւ դուրս եկան:

ՀՐԱՏԱՊ ԳՐՈՒԹՅՈՒՆ

# ՌԱԶՄԱԿԱՆ ՆՈՐ ԱԳՐԵՍԻԱ

**«Թուրք-ադրբեջանական տանդեմը կրկին հող է նախապատրաստում նոր ռազմական ագրեսիայի համար. հրատապ գրություններ եմ հասցեագրել միջազգային գործընկերներիս»,- այս մասին հայտարարություն է տարածել ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը:**



Չնայած Նիկոլ Փաշինյանի իշխանության պատրաստակամությանը՝ ամեն ինչ անել, որ մինչեւ տարեվերջ խաղաղության պայմանագիր ստորագրվի, Ադրբեջանը շարունակաբար կրակ է բացում խաղաղ հայ բնակչության նկատմամբ, ովքեր ընդամենը իրականացնում են գյուղատնտեսական աշխատանքներ: Եվ այս մարդիկ՝ ներառյալ երեխաներ, կանայք եւ ծերեր, թիրախավորվում են ադրբեջանական ուժերի կողմից. ինչու՞, որովհետեւ Ադրբեջանը ձգտում է քայլ առ քայլ կյանքի կոչել պետության ղեկավարի մակարդակով հովանավորվող իր ցեղասպանական քաղաքականությունը:

Մասնավորապես՝ Ադրբեջանը՝

- Նոյեմբերի 5-ին Արցախի Խրամորթ գյուղի տարածքում գյուղատնտեսական աշխատանքներ իրականացնող քաղաքացիական անձանց ուղղությամբ արձակել է թիրախային կրակոցներ
- Նոյեմբերի 12-ին Արցախի Խրամորթ գյուղի տարածքում գյուղատնտեսական աշխատանքներ իրականացնող քաղաքացիական անձանց ուղղությամբ արձակել է թիրախային կրակոցներ
- Շարունակ կրակ է բացում հայ-ադրբեջանական սահմանին տեղակայված դիրքերի, հայ բնակչության ուղղությամբ եւ միաժամանակ ապատեղեկատվություն տարածում՝ հայկական կողմին մեղադրելով՝ իբր ադրբեջանական դիրքերի ուղղությամբ կրակելու համար:

Հիշեցնեմ, որ Ադրբեջանի այս բացարձակ անթույլատրելի գործողությունների արդյունքում ունենք վիրավորներ խաղաղ բնակչության շրջանում /Ա. Հայրապետյանը ստացել է մարմնական վնասվածք, Պ. Խ.-ն ստացել է հրազենային վիրավորում/, ինչպես նաեւ գյուղատնտեսական տեխնիկաներին հասցված վնասներ:

Ադրբեջանի այս հանցավոր վարքագիծը հայ ժողովրդի նկատմամբ էթնիկ ատելության դրսեւորում է եւ պարզապես ոտնահարում է Արցախի եւ Հայաստանի խաղաղ բնակչության կյանքի իրավունքը, որը միջազգային հումանիտար իրավունքի անկյունաքարային դրույթների կոպիտ խախտում է:

Ներկա իրավիճակի, Ադրբեջանի իրականացրած ագրեսիաներին նախորդող գործելաոճի վերլուծությունը հիմքեր է տալիս ահազանգելու, որ թուրք-ադրբեջանական տանդեմը հող է նախապատրաստում նոր ռազմական ագրեսիայի համար, ուստի հրատապ գրություններ եմ հասցեագրել միջազգային գործընկերներիս՝ գործարկելու բոլոր հնարավոր իրավաքաղաքական մեխանիզմները՝ դատապարտելու Արցախի եւ Հայաստանի ժողովրդի հիմնարար իրավունքները խախտող Ադրբեջանի հանցավոր վարքագիծը, եւ թույլ չտալու նոր ագրեսիա խաղաղ հայ բնակչության նկատմամբ, ովքեր պարզապես ցանկանում են անվտանգ եւ երջանիկ կյանք վարել իրենց հայրենի հողում:

ՕՐՎԱ ԽԾԱՆԿԱՐ

## ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը նոյեմբերի 15-ին ընդունել է ԵՄ եւ ԵՄ անդամ երկրների Արեւելյան գործընկերության հարցերով հատուկ բանագնացների պատվիրակությանը:

Արարատ Միրզոյանը ներկայացրել է Հայաստանի Կառավարության կողմից տարբեր ոլորտներում իրականացվող բարեփոխումները, ժողովրդավարության առաջմղման, մարդու իրավունքների պաշտպանության, օրենքի գերակայության ամրապնդման ուղղությամբ կատարվող քայլերը:

Քննարկվել են Հայաստան-Եվրամիություն երկկողմ օրակարգին եւ ՀՀ-ԵՄ Համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագրի իրականացման ընթացքին վերաբերող հարցեր: Արձանագրելով, որ ԵՄ-ի հետ առկա է ընդհանուր արժեքների վրա հիմնված բարձր մակարդակի քաղաքական երկխոսություն՝ Արարատ Միրզոյանը կարեւորել է շարունական եւ գործուն քայլերով ԵՄ հետ բազմոլորտ համագործակցության զարգացումը, այդ թվում՝ Արեւելյան գործընկերության շրջանակում: Կողմերը մտքեր են փոխանակել Հայաստանում ԵՄ դիտորդական առաքելության գործունեության ու նշանակության վերաբերյալ:

## ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Արցախի Հանրապետության պետական նախարար Ռուբեն Վարդանյանն ընդունել է Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ԿԽՄԿ)՝ Լեռնային Ղարաբաղի առաքելության պատվիրակությանը՝ ղեկավար Նիկոլյա Ֆլյորիի գլխավորությամբ:

Նիկոլյա Ֆլյորին տեղեկություններ է ներկայացրել՝ այս տարվա ընթացքում կատարված եւ ընթացիկ աշխատանքների, ինչպես նաեւ բնակչության խոցելի խմբերին ուղղված սոցիալ-տնտեսական աջակցության ծրագրերի մասին: Քննարկվել են հետագա համագործակցության, ծրագրերի իրականացման շարունակականության ապահովմանը վերաբերող հարցեր: Ռուբեն Վարդանյանը պատվիրակության ուշադրությունն է հրավիրել նաեւ օրեր առաջ Ասկերանի շրջանի Խրամորթ գյուղում տեղի ունեցած միջադեպերի վրա, երբ ադրբեջանական մարտական դիրքերից կրակոցներ էին արձակվել դաշտում տրակտորով աշխատող քաղաքացիական անձանց ուղղությամբ: Զրուցակիցներն առաջնային են համարել բնակչության բոլոր խմբերի անվտանգության ապահովումը: «Արցախում շուրջ 30 հազար երեխա է ապրում, մենք պարտավոր ենք ապահովել նրանց անվտանգությունն ու խաղաղ մանկությունը»,-ասել է պետնախարար Ռուբեն Վարդանյանը:

## ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ՝ ՀԵՌԱԽՈՍԱԶՐՈՒՅՑԻՑ

Նոյեմբերի 15-ին տեղի է ունեցել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հեռախոսազրույցը ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենի հետ: Զրուցակիցները մտքեր են փոխանակել Հայաստանի ու Ադրբեջանի միջեւ հարաբերությունների կարգավորման, մասնավորապես՝ նոյեմբերի 7-ին Վաշինգտոնում տեղի ունեցած Հայաստանի ու Ադրբեջանի ԱԳ նախարարների եւ դրան հետեւած եռակողմ հանդիպման վերաբերյալ: Պետքարտուղար Բլինքենը ԱՄՆ պատրաստակամությունն է հայտնել շարունակելու աջակցությունը Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների, ինչպես նաեւ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման հարցում: Վարչապետ Փաշինյանը բարձր է գնահատել ԱՄՆ ջանքերը եւ պետքարտուղար Բլինքենի անձնական ներգրավվածությունը: Զրուցակիցները պայմանավորվել են շարունակել քննարկումները՝ տարածաշրջանում անվտանգության եւ կայունության մակարդակի բարձրացմանն ուղղված քայլերի, այդ թվում՝ հումանիտար հարցերի կարգավորման վերաբերյալ:

ՊԵՄԶԱՇԵՆԻ ԳՈՐԾՈՎ

# ԵՐԿՈՒ ԱՆՁ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵԼ Է

**ՀՀ քննչական կոմիտեի՝ Շիրակի մարզային քննչական վարչության Արթիկի և Անիի քննչական բաժնում շարունակվում է Պեմզաշեն գյուղի 31-ամյա բնակչուհու և վերջինիս երկու երեխաների սպանության դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը:**




ՀՀ ոստիկանության, ՀՀ դատախազության, ՀՀ ԱԱԾ աշխատակիցների հետ համատեղ ձեռնարկված միջոցառումների, ինչպես նաեւ՝ՀՀ ԱՆ դատաբժշկական գիտագործնական կենտրոնի դատագենետիկական, դատաբժշկական եւ դատակենսաբանական փորձաքննությունների բաժինների աշխատակիցների կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել են դեպքի՝ էական նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ, այդ թվում՝ շարժառիթը, ենթադրյալ հանցագործություն կատարած անձանցից եւս մեկի ինքնությունը, ով օրեր առաջ ձերբակալված 32-ամյա տղամարդու ազգականն է՝41 տարեկան:

Մասնավորապես՝ քննությամբ փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ Շիրակի մարզի 32-ամյա բնակիչը, ով տառապում է «անձի էմոցիոնալ խանգարում՝ սուիցիդալ մտքերով» հոգեկան հիվանդությամբ, 2022թ. նոյեմբերի 8-ին՝ժամը 21:00-ի սահմաններում, իր ազգական, նույն բնակավայրի 41-ամյա բնակչի հետ հանդիպման ընթացքում տեղեկանալով Պեմզաշեն բնակավայրի 31-ամյա բնակչուհու տանը ենթադրաբար գումար լինելու մասին, ձեռք է բերել պայմանավորվածություն՝ վերջինիս տուն ապօրինի մուտք գործելու եւ գումար հափշտակելու վերաբերյալ, որից հետո, իրենց մտադրությունն իրագործելու նպատակով, նույն օրն ապօրինի մուտք են գործել տուն՝ օգտվելով մուտքի դռան բաց լինելու հանգամանքից:

Տանտիրուհուց տեղեկանալով, որ տանը գումար չկա, իրենց կողմից կատարված հանցագործությունները թաքցնելու նպատակով, նախ կապել եւ միմյանց գործողությունները փոխլրացնելով՝ առանձին դաժանությամբ սպանել են կնոջը, ապա 32-ամյա տղամարդը, կատարված հանցանքները թաքցնելու նպատակով, ապօրինաբար կյանքից զրկելու դիտավորությամբ, կապել է երեխաների ձեռքերն ու ոտքերը եւ խոհանոցային դանակով հարվածներ է հասցրել նրանց մարմնի տարբեր մասերին՝պատճառելով կյանքի հետ անհամատեղելի մարմնական վնասվածքներ: Ձեռք բերված բավարար ապացույցների համակցությամբ՝ 32-ամյա տղամարդուն մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ, 8-րդ եւ 13-րդ կետերով, 155-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ , 5-րդ, 6-րդ եւ 13-րդ կետերով (2 դրվագ), 252-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով եւ 198-րդ հոդվածի 4-րդ մասով, իսկ վերջինիս 41-ամյա ազգականին՝155-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ, 13-րդ կետերով եւ 252-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով: Միջնորդություն է ներկայացվել դատարան՝ նրանց նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ, ինչը բավարարվել է:

Նախաքննությունը շարունակվում է:

Հիշեցնենք, որ ArmLur.am-ին ավելի վաղ հայտնի էր դարձել՝ Պեմզաշենում մորը եւ երկու երեխաներին դաժան կերպով սպանության գործով ձերբակալվածները ինչ են պատմել իրավապահներին: Այսպիսով՝ArmLur.am-ին հասած բացառիկ տեղեկությունների համաձայն՝այս պահին քրեական գործով դեպքի մասին իրավապահներին ողջ եղելությունը պատմել է ձերբակալվածներից միայն Պեմզաշենի բնակիչ Վրույր Բարսեղյանը: Նա նախաքննական մարմնում պատմել է, որ տուն է մտել գիշերը տան հիմնական դռնից, եւ տան դուռը բաց է եղել: Զարինե Մելիքսեթյանի տուն են մտել գողության նպատակով, բայց երբ խառնաշփոթ իրավիճակ է եղել, տան անդամները դիմադրել են, նրանք կապել են ընտանիքի անդամներին, որից հետո էլ սեռական բռնի գործողությունների են դիմել:

ԼՈՒՐԵՐ

## ԿՌԻՎ ԵՆ ՏԱԼԻՍ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Վահագն Թորոսյանը դիմել է դատարան:

Մեզ հայտնի դարձավ, որ նա, դիմելով վարչական դատարան, պահանջում է, որ դատարանը ստիպի Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին՝ իր վերաբերյալ կազմված թիվ 228-05-2022 բարեվարքության եզրակացության կազմումը ոչ իրավաչափ ճանաչել եւ իր վերաբերյալ բարեվարքության դրական եզրակացություն կազմելուն պարտավորեցնել:

## ԴԻՄՈՒՄ ԵՆ ԴԱՏԱՐԱՆ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Հայկ Հակոբյանը դիմել է դատարան եւ պահանջել, որ դատարանը ստիպի նախարարությանը՝ 2022թ. հոկտեմբերի 19-ի հրամաններն անվավեր ճանաչել եւ որպես հետեւանքների վերացման ածանցյալ պահանջ՝ բռնագանձել ամսական միջին աշխատավարձը՝ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար, 24.10.2022թ.-ից մինչեւ դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը հայցվորին նախկին աշխատանքում վերականգնել:

## ՓՆՏՐՈՒՄ ԵՆ

ArmLur.am-ի տեղեկությունների համաձայն՝ իրավապահներն այս պահին փնտրում են Ապարանի կրակոցներով երկրորդ անձի, որի նկատմամբ խափանման միջոց է ընտրված կալանավորումը. նա սպանության մեղադրանքով կալանավորված Արմեն Հովհաննիսյանի ընկերն է: Այս պահին քրեական վարույթով հարցաքննվել է մոտ 50 անձ եւ առաջիկայում ուշագրավ զարգացումներ են սպասվում:

Հիշեցնենք, որ 2022թ. հունիսի 18-ին՝ ժամը 22:30-ի սահմաններում, Երեւան քաղաքի 32-ամյա բնակիչը եղբոր հետ Ապարան քաղաքում ավտոմեքենան վարելու ընթացքում ձայնային ազդանշան է տվել «Ինֆինիտի» մակնիշի ավտոմեքենային, շրջանցել եւ կանգնեցրել այն, այնուհետեւ մոտեցել են վարորդին եւ մեքենան վարելու հարցի շուրջ զրուցել նրա հետ, ինչին միջամտել են Ապարան քաղաքի մի խումբ բնակիչներ: Խոսակցությունը վերածվել է վիճաբանության, որը շարունակվել է Ապարան քաղաքի սկզբնամասում:

Նշված խոսակցությունը շարունակելու նպատակով հաջորդ օրը՝ հունիսի 19-ին, 32-ամյա տղամարդը, նրա եղբայրը մի քանի անձանց հետ գնացել են Ապարան քաղաքում գտնվող գազալցակայանի տարածք, հանդիպել նախորդ օրը իրենց խոսակցությանը միջամտած անձանցից մեկին եւ ծեծի ենթարկել վերջինիս: Նույն հարցի շուրջ խոսակցությունը ժամը 19:30-ի սահմաններում շարունակվել է Նիգավան գյուղի աղբանոցին հարակից տարածքում, որի ընթացքում 32-ամյա տղամարդն իր մոտ գտնվող հրացանից կրակոցներ է արձակել իրենց հետ վիճաբանող անձանց ուղղությամբ:

Նախաքննությունը շարունակվում է:

*Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ*

ԼՈՒՐԵՐ

## ՔՐԵԱԿԱՆ ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՁԵՐԲԱԿԱԼՎԵՑ

Քիչ առաջ ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ ՀՀ քննչական կոմիտեն 4-րդ քրեական հեղինակությանն է կալանավորել, որը Ստեփանավան քաղաքից է: Կոմիտեն հայտնել էր, «օրենքով գողի» քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող եւ Էրո Տոմսկի մականվամբ հայտնի Էրիկ Ջաղինյանը ղեկավարել է իր կողմից ստեղծած՝ քրեական ենթամշակույթ կրող խմբավորումը:

Մասնավորապես՝ Էրիկ Ջաղինյանի կողմից կատարված հստակ դերաբաշխման համաձայն՝քրեական ենթամշակույթ կրող խմբավորման անդամներ Ա.Ն.-ն, Կ.Ղ.-ն եւ Վ.Մ.-ն 2021 թվականի դեկտեմբերի 15-ից 27-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ԱՆ տարբեր քրեակատարողական հիմնարկների դատապարտյալների համար կազմակերպված, այսպես ասած՝ «գրեֆի» շրջանակներում տարբեր անձանցից ստացել են մոտ 1.500 տուփ ծխախոտ, 300 տուփ թեյ եւ շուրջ 1.500.000 ՀՀ դրամ կանխիկ գումար եւ Է.Ջ-ի ցուցումի համաձայն՝ Ա.Ն.-ն դրանք բաժանել է քրեակատարողական հիմնարկներում, հավաքագրված գումարից, այսպես կոչված՝որպես «գրեֆ» ուղարկել 350.000 ՀՀ դրամը:

Քննությամբ պարզվել է նաեւ, որ, Ա.Ն.-ն 2022 թվականի ապրիլի 28-ից սկսած, Ստեփանավանի տարածաշրջանի բնակիչների շրջանում կազմակերպել է կանխիկ գումարների, ծխախոտի, սուրճի եւ թեյի հավաքագրման գործընթաց, ինչն ուղարկվել է ՀՀ ԱՆ տարբեր քրեակատարողական հիմնարկներ:

Ձեռք բերված բավարար ապացույցների համակցությամբ՝ քրեական ենթամշակույթ կրող խմբավորման 3 անդամի ներկայացվել է ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանրային քրեական հետապնդում, եւ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը, եւ ահա այս նույն քրեական գործի շրջանակներում կալանավորվել է 4-րդ անձը:

## «ՕՐԵՆՔՈՎ ԳՈՂԸ» ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵՑ

ArmLur.am-ը գրել էր, որ Երեւանում՝ Մուրացան 109 հասցեից, ոստիկանության Էրեբունու բաժին բերման էին ենթարկվել մեկ տասնյակից ավելի անձինք:

Բերման ենթարկվածների թվում են եղել օրենքով գող Պզոն՝ Արմեն Ղազարյանը, այլ անձինք եւս, որոնցից մեկը հայտնի է որպես «կաբելի տղա», որը շուտով պետք է դառնար «օրենքով գող»:Եվ ահա, ArmLur.am-ին քիչ առաջ հայտի դարձավ, որ «օրենքով գող» Պզոն՝ Արմեն Ղազարյանը կալանավորվել է:

*Նյութերը՝ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ*

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ նոյեմբերի 14-ից 15-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 80 դեպք, որից 10-ը՝նախկինում կատարված:*

ՄԱՐԶ

## ԹԱՔՑՆՈՒՄ Է ՊԱՐԳԵՎԱՎՃԱՐՆԵՐԸ

Տավուշի մարզպետարանի պաշտոնյաները 2022թ.-ի ընթացքում պետական բյուջեից ընդհանուր առմամբ կստանան 88 միլիոն 92 հազար 700 դրամ պարգեւավճար: Մարզի հանրակրթական բազում դպրոցների շենքեր վատթար վիճակում են, վերանորոգման խիստ կարիք ունեն, սակայն պետական բյուջեից գումարներ չեն հատկացվում դրանք նորոգելու համար: Դպրոցների շենքերը նորոգելու համար պետբյուջեում փող չկա, իսկ Տավուշի մարզպետարանի պաշտոնյաների պարգեւատրման համար պետբյուջեում փող լիուլի կա: Տավուշի մարզպետարանի պաշտոնյան, ով խնդրեց իր անունը չհրապարակել, հայտնեց, որ նախկին իշխանության օրոք մարզպետարանի աշխատակազմը պարգեւատրվում էր տարեկան մի քանի անգամ անգամ, իսկ Նիկոլ Փաշինյանի օրոք մարզպետարանում պարգեւատրումները կանոնավոր բնույթ են կրում: Հայտնի չէ, թե ինչ դրական արդյունքների համար են պարգեւատրվում մարզպետն ու իր ենթակա պաշտոնյաները: Վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշումներով 2019թ. սեպտեմբերի 12-ին Իջեւան համայնքի ղեկավարի պաշտոնակատար, 2021 թվականի ապրիլի 8-ին Տավուշի մարզպետ նշանակվեց Նիկոլ Փաշինյանի դասընկեր, նրա հարսանիքի քավոր Հայկ Ղալումյանը: Մարզպետ Ղալումյանը չի հրապարակում, թաքցնում է՝ իրեն եւ մարզպետարանի մյուս պաշտոնյաներին պարգեւատրելու մասին իր որոշումները. դրանք նախկին տարիների նման չեն զետեղվում Տավուշի մարզպետարանի ինտերնետային կայքում: Մարզպետ Հ. Ղալումյանի օրոք քաղաքացիների հետ շփումները կրճատելու համար մարզպետարանի շենքի առաջին հարկում մետաղական արգելափակոց է տեղադրվել, մարզխորհրդի նիստերը ձեւական բնույթ են կրում, դրանք նշանակում են ժամը 17-ին եւ օրակարգի 5-6 հարցերի քննարկման, որոշումների ընդունման համար աշխատանքային օրում մնում է ընդամենը մեկ ժամ:

## ԴՊՐՈՑԻՆ ՉԻ ԱԶԱԿՑՈՒՄ

2012թ. սեպտեմբերի 1-ից Իջեւանի թիվ 5 հիմնական դպրոցի առջեւ հառնում է հայտնի հումորիստ Գարիկ Մարտիրոսյանի պապի՝ 1960թ-ին վաստակավոր ուսուցչի կոչմանը արժանացած, այդ դպրոցի երկարամյա տնօրեն Մկրտիչ Մարտիրոսյանի կիսանդրին: 2012թ. սեպտեմբերի 29-ին կայացավ արձանի հանդիսավոր բացումը, որին ներկա չէր Գ. Մարտիրոսյանը: Արձանի բացման արարողության ժամանակ ընթերցվեց Գ. Մարտիրոսյանի հեռագիրը, որտեղ նա շնորհակալություն էր հայտնում իր պապի վաստակի նկատմամբ ցուցաբերած գնահատականի համար: Գ. Մարտիրոսյանը ռուսական շոու բիզնեսի աստղերից է. հարուստ մարդ է: Արձանի բացումից 10 տարի է անցել: Գ. Մարտիրոսյանը Իջեւան այցելությունների ժամանակ, երբ այցելում է իր պապի հուշարձանին, չի մտնում պապի անունը կրող Իջեւանի թիվ 5 դպրոցի տարածք, ուսուցչանոց, որպեսզի հետաքրքրվի, թե այդ մեծ դպրոցը չլուծված ի՞նչ խնդիրներ ունի, եւ ինքը ինչով կարող է օգնել այդ հիմնախնդիրների լուծմանը: Այդ մասին հայտնեցին Իջեւանի N 5 դպրոցից:

*ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ*
*Տավուշ*

ԿԵՆՍԱԹՈՇԱԿ

# ՎՃԱՐՎԵԼՈՒ Է ՄԻԱՅՆ ԱՆԿԱՆԽԻԿ

**Գործադիրն առաջարկում է ընտանեկան եւ սոցիալական նպաստի, ինչպես նաեւ հրատապ օգնության գումարների վճարումները 2023 թ. հունվարի 1-ից քաղաքներում եւ 1000-ից ավելի բնակչություն ունեցող գյուղական բնակավայրերում, իսկ 2024թ.՝ մինչեւ 1000 բնակիչ ունեցող գյուղերում իրականացնել անկանխիկ եղանակով:**



ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Դավիթ Խաչատրյանը նշել է, որ նախագծի ընդունումը պայմանավորված է ընտանեկան, սոցիալական նպաստի, ինչպես նաեւ՝ հրատապ օգնության գումարների վճարման գործընթացի բարելավման եւ պետական բյուջեի միջոցների ծախսերի նվազեցման, ինչպես նաեւ՝ կենսաթոշակների, նպաստների ու պետության կողմից վճարվող այլ գումարների համար հատուկ նպատակով բացված սոցիալական էլեկտրոնային փողի հաշվին միջոցները կանխիկացնելու հնարավորության դադարեցման անհրաժեշտությամբ: Սոցիալական էլեկտրոնային փողերին վերաբերող կանխիկացման բացառությունները գործելու են մինչեւ 2023 թ. փետրվարի մեկը:

2021 թ. հուլիսի 1-ից կենսաթոշակների եւ կենսաթոշակների վճարման կարգով վճարվող այլ դրամական վճարները բացառապես անկանխիկ եղանակով են վճարվում: Փոխնախարարի խոսքով՝ նպատակահարմար է այս համակարգը ներդնել նաեւ ընտանեկան եւ սոցիալական նպաստի, ինչպես նաեւ՝ հրատապ օգնության գումարների համար:

«Պետական նպաստների մասին» եւ «Պետական կենսաթոշակների մասին» օրենքներում առաջարկվող այս փոփոխությունները քննարկվել են ԱԺ նոյեմբերի 15-ի նիստում:

Դավիթ Խաչատրյանը պարզաբանել է, որ ազգային օպերատորն անկանխիկ եղանակով կենսաթոշակ ու նպաստ կարող է վճարել մինչեւ 2023 թ. փետրվարի մեկը:

Փոխնախարարն անդրադարձել է պատգամավոր Ջարուհի Բաթոյանի՝ նոր կարգավորումների գործարկման դեպքում հնարավոր տեխնիկական խնդիրների առաջացման հարցին: Ըստ նրա՝ ուսումնասիրությունները ցույց են տվել, որ 1000-ից ավելի բնակիչ ունեցող գյուղերում հունվարի մեկից նման խնդիր չի լինելու:

Պատգամավոր Գեւորգ Պապոյանի հարցին ի պատասխան՝ Դավիթ Խաչատրյանը տեղեկություններ է փոխանցել անկանխիկ գործարքներ կատարելիս կենսաթոշակառուին ու նպաստառուին տրվող հետվճարի ծրագրի վերաբերյալ: Նրա համոզմամբ՝ առաջին ամսից դրական դինամիկա է արձանագրվել, հոկտեմբերի վերջի տվյալներով անկանխիկ գործառնություններն այսպիսի քարտերով շուրջ 1.8 մլրդի է հասել: «Մենք որոշել ենք, որ պետք է երկարաձգենք ծրագիրն առնվազն 2023թ. գոնե վեց ամսով»,- ասել է նա:

Գեւորգ Պապոյանն ընդգծել է, որ, ցավոք, ոչ բոլոր բանկերն են միացել ծրագրին, հետեւաբար՝ ոչ բոլոր կենսաթոշակառուներն են օգտվում այդ հնարավորությունից: Նա կարեւորել է այն փաստը, որ հետվճարի 50 տոկոսը պետությունն է վճարում, մյուս 50 տոկոսը՝ բանկերը: Ըստ պատգամավորի՝ սա պետության եւ բանկային համակարգի համատեղ աշխատանքի արդյունքն է՝ ի շահ քաղաքացիների:

Ծրագրին միացել են «Արդշինբանկը», «Հայբիզնեսբանկը», «ԱԿԲԱ» բանկը եւ «ՎՏԲ Հայաստան» բանկը, որոնք ծածկում են դաշտի 60 տոկոսից ավելին: Վիճակագրական տվյալներ ներկայացնելով՝ փոխնախարարը նշել է, որ մինչ ծրագիրը սկսելը, անկանխիկ եղանակով քարտերի միջոցով վճարումներ ստանում էր 389.000 շահառու, այսօր 415.000-ը գերազանցում է: Ըստ նրա՝ այս թվերը վկայում են ծրագրի արդյունավետության մասին: Գնահատվել է ծրագրին միացած բանկերի կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը:

Հարցուպատասխանի ընթացքում անդրադարձ է եղել նաեւ հրատապ օգնության տրամադրման հնարավորություններին:

ԱԺ աշխատանքի եւ սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովը հարցի վերաբերյալ տվել է դրական եզրակացություն: Այս մասին հայտնել է պատգամավոր Գայանե Եղիազարյանը:

ԼՈՒՐԵՐ

## ԳԻՏԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

ՀՀ ԿԳՄՍՆ հասարակայնության հետ կապերի եւ տեղեկատվության վարչությունից Armlur.am-ին հայտնեցին, որ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը եւ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանը 2022 թվականի նոյեմբերի 15-17-ը մեկնել են Բելգիայի Թագավորություն (Բրյուսել)՝Հետազոտությունների եւ նորարարության հարցերով Եվրոպական միություն-Հայաստան համատեղ կոմիտեի առաջին հանդիպմանը մասնակցելու նպատակով: Քննարկվելու են ՀՀ գիտական համայնքի եվրոպական հետազոտական տարածքին ինտեգրմանն ուղղված ծրագրերը եւ «Հորիզոն Եվրոպա» ծրագրին ՀՀ մասնակցության 2021-2022 թվականի արդյունքները: Այցի շրջանակում նաեւ ամփոփվելու են ՀՀ մասնակցության խթանմանն ուղղված միջոցառումները: Եվրոպական կողմը կներկայացնի եվրոպական հետազոտական տարածքի նոր քաղաքականությունը եւ ԵՀ կողմից մշակված «Հետազոտությունների եւ նորարարության ոլորտներում գլոբալ մոտեցման» սկզբունքները: Կքննարկվեն նաեւ ՀՀ գիտական եւ գիտատեխնիկական գործունեության ոլորտում իրականացվող բարեփոխումների ծրագիրը եւ ԵՄ «Քաղաքականության աջակցության գործիք» ծրագրի շրջանակում փորձագիտական երաշխավորությունների ներդրման ընթացքը:

Հետազոտությունների եւ նորարարության հարցերով ԵՄ-Հայաստան համատեղ կոմիտեն ստեղծվել է 2021 թվականի նոյեմբերի 12-ին ստորագրված «Հետազոտությունների եւ նորարարության «Հորիզոն Եվրոպա» ծրագրին ՀՀ մասնակցության մասին համաձայնագրի շրջանակում: Հայաստանյան կողմից կոմիտեն համանախագահում է ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը: Եվրոպական կողմից կոմիտեի համանախագահը ԵՀ հետազոտությունների եւ նորարարության հարցերով գլխավոր տնօրենության «Հորիզոն Եվրոպա» ծրագրի ասոցացման հարցերով ստորաբաժանման ղեկավարի տեղակալ Աննա Հագլունդ-Մորիսին է:

## ԳԵՐԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՍԱՐՔԵՐ

Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոնը համալրվել է եվրոպական արտադրության գերժամանակակից նոր բժշկական սարքավորումներով: Բարերար Կարեն Վարդանյանի աջակցության շնորհիվ վերակենդանացման բաժանմունքն արդեն ունի թոքերի արհեստական շնչառության սարքեր, բրոնխոսկոպ, հեմոդիալիզի սարք, նորածնային կյուվեզներ, սրտի եւ ճնշման աշխատանքը հսկող մոնիտորներ: Բազմաֆունկցիոնալ զննման սեղաններով համալրվել է նաեւ հիվանդանոցի առաջին օգնության հատվածը: Լաբորատորիայի համար էլ ձեռք է բերվել մանրէաբանական վերլուծիչ սարք: Կյանք փրկող ավելի քան 20 սարքավորման եւ օժանդակ նյութերի ձեռքբերման համար բարերար Կարեն Վարդանյանը տրամադրել է 112 մլն դրամ:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 11 ՃՏՊ. 1 մարդ զոհվել է, 20-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

## ԼՈՒՐԵՐ

### ԳՈՒՅՔԻ ԱՃՈՒՐԴ

Յուրի Սելիպանովի՝ գույքի աճուրդի կազմակերպման եւ անցկացման մասին 25.11.2022թ. նշանակված աճուրդը չեղարկվել է:

### ԿԱՍԵՑՎԵԼ Է ԱՇԽԱՏԱՆՔԸ

ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Կոտայքի մարզային կենտրոնի տեսուչների կողմից իրականացված վերահսկողական միջոցառումների արդյունքում սանիտարահիգիենիկ նորմերի խախտումներ են հայտնաբերվել «Յունիվերսալ Էքսպորտ» ՍՊԸ-ին պատկանող պահածոների արտադրամասում (Կոտայքի մարզ, գ. Բջնի):

Ստուգմամբ պարզվել է, որ արտադրական շինության հատակի մակերեւույթները, որտեղ իրականացվում է սննդամթերքի արտադրությունը, անհարթ են, ջրանցիկ, հեշտությամբ չեն կարող մաքրվել, ախտահանվել եւ պատշաճ կերպով ցամաքեցվել:

Արտադրամասի արտադրական գործունեությունը կասեցվել է, սահմանվել է խախտումները վերացնելու ժամկետ:

### ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

Համապատասխան մաթեմատիկական մոդելների կառուցման եւ միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքում առաջարկվում է 2023 թ. հունվարի 1-ից ՀՀ նվազագույն ամսական աշխատավարձի չափը 68.000 դրամից բարձրացնել եւ դարձնել 75.000 դրամ: Այս մասին ասել է ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Ռուբեն Սարգսյանը ՀՀ ԱԺ հերթական նիստերի ընթացքում: Կառավարության հեղինակած ««Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» եւ «ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթն առաջին ընթերցմամբ քննարկվել է նոյեմբերի 15-ին:

Նախագծերի փաթեթով առաջարկվում է փոփոխություններ կատարել ամսական եւ ժամային տարիֆների դրույթների չափերում՝ բարձրացնելով այն: Նախաձեռնությունը բխում է Կառավարության գործունեության ծրագրից: Նախագծերի փաթեթը մշակելիս հաշվի են առնվել ներկայիս սոցիալ-տնտեսական վիճակը, ինչպես նաեւ՝ երկրի մակրոտնտեսական ցուցանիշների մասին տեղեկատվություն պարունակող բազաների վերլուծության արդյունքները: Նախագծերի փաթեթը գլխադասային հանձնաժողովում քննարկվել եւ արժանացել է դրական եզրակացության:

Աշխատանքի եւ սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի անդամ Զարուհի Բաթոյանը, նշելով, որ նախագծերի փաթեթը Կառավարության ծրագրերի իրականացման գործընթացների բաղկացուցիչ մասն է կազմում, ընդգծել է, որ Կառավարությունը սահմանել է նվազագույն աշխատավարձը մինչեւ 2026 թ. դարձնել 85.000 դրամ:

## «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» Գ.

# Google Pay-Ը ԵՎ Google Wallet-Ը ՀԱՄԱՆԵԼԻ ԵՆ (1)

**Այսօրվանից «Ամերիաբանկը» Հայաստանում գործարկում է Google Pay ծառայությունը եւ իր հաճախորդներին ընձեռում պարզ եւ անվտանգ անհպում վճարումներ կատարելու եւ թվային քարտեր պահելու հնարավորություն:**




Ծառայությունից հնարավոր է օգտվել ինչպես Android, այնպես էլ Wear OS սարքերի միջոցով: Google Pay-ն «Ամերիաբանկի» հաճախորդներին թույլ է տալիս վճարումներ կատարել՝ առանց բանկային քարտ օգտագործելու, POS տերմինալի վրա գաղտնաբառ մուտքագրելու կամ կանխիկ գումար օգտագործելու:

Քարտապանները կարող են «Ամերիաբանկի» դեբետային եւ կրեդիտային քարտերը կցել Google Wallet թվային դրամապանակին, որն ի դեպ, նույնպես գործարկվում է այսօր, վճարումներ կատարել ցանկացած վայրում, որտեղ ընդունվում են անհպում վճարումներ:

Բացի վճարային քարտերից, քարտապանները կարող են Google դրամապանակին կցել եւ օգտագործել նաեւ հավատարմության քարտեր, նստեցման կտրոններ եւ միջոցառումների տոմսեր: Google Pay-ը վճարումներն առավել ապահով է դարձնում անվտանգության մի քանի մակարդակների կիրառման միջոցով, որոնք լրացնում են «Ամերիաբանկի» քարտերի՝ արդեն իսկ գործող անվտանգության մեխանիզմները:

Սա ներառում է ոլորտի չափանիշներին համապատասխանող թոքենների կիրառում, ինչը նշանակում է, որ Google Wallet-ին կցված քարտով վճարում կատարելիս գործարքներն իրականացվում են վիրտուալ քարտի համարի (թոքենի) միջոցով: Այս թոքենն աշխատում է ըստ սարքի առանձնահատկությունների եւ կապված է դինամիկ անվտանգության կոդի հետ, որը փոխվում է յուրաքանչյուր գործարքի հետ՝ ապահովելով լրացուցիչ պաշտպանություն զեղծարարությունից: Բացի այդ, հեռախոսի կորչելու կամ հափշտակվելու դեպքում քարտապանը պարզապես կարող է օգտվել «Գտնել իմ սարքը» հրահանգից՝ սարքը ցանկացած վայրից ակնթարթորեն բլոկավորելու, նոր գաղտնաբառով պաշտպանելու եւ անգամ՝ անձնական տվյալները ջնջելու համար:

«Google Pay-ն ապահովում է Android հեռախոսներով կամ Wear OS սարքերով արագ, հեշտ եւ անվտանգ վճարումներ կատարելու հնարավորություն աշխարհի ավելի քան 45 երկրում», - նշեց Google Wallet-ի փոխնախագահ եւ գլխավոր տնօրեն Ջենի Չենգը:

«Օգտատերերը կարող են պարզապես կցել իրենց դեբետային եւ կրեդիտային քարտերը Google Wallet-ին եւ վստահ լինել, որ գնումներ կամ վճարումներ կատարելիս իրենց ֆինանսական տվյալներն ապահով են եւ պաշտպանված»:

Ամերիաբանկի քարտը Google Pay-ով օգտագործելու համար պարզապես անհրաժեշտ է ներբեռնել Google Wallet-ը Google Play Store-ից:

«Հավատարիմ մնալով թվային փոխակերպման օրակարգին՝ «Ամերիաբանկը» միշտ ձգտում է իր հաճախորդների համար ապահովել ժամանակակից եւ դրական բանկային փորձառություն՝ ամենաառաջադեմ թվային տեխնոլոգիաների կիրառմամբ: Ուրախությամբ տեղեկացնում ենք, որ Google-ի հետ մեր համագործակցության շնորհիվ Հայաստանում մեր քարտապանների համար արդեն հասանելի է անհպում վճարումների նոր եղանակ՝ Google Pay-ը», -ասաց «Ամերիաբանկի» Վճարային քարտերի գործառնությունների բաժնի ղեկավար Տիգրան Հովհաննիսյանը:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ Գ.

### ԱՆՀՊՈՒՄ (2) ՎՃԱՐՈՒՄՆԵՐ

«Կոնվերս» բանկի հաճախորդների համար հասանելի է եւս մեկ վճարային նորարար լուծում՝ Google Pay-ը:

Google Pay վճարային համակարգի գործարկմամբ բանկի հաճախորդները հնարավորություն ունեն իրականացնել անվտանգ, անհպում վճարումներ ու գործարքներ ոչ միայն առեւտրի ու սպասարկման կետերում, անհպում գործարքներ ապահովող բանկոմատներում, այլեւ Google Pay-ը սպասարկող հավելվածներում ու կայքերում. ֆիզիկական քարտի փոխարեն որպես վճարման միջոց կիրառվում է Կոնվերս Մոբայլ հավելվածին կամ Google Wallet-ին կցված վիրտուալ քարտը/քարտերը, ինչը ոլորտում թոքենացման ստանդարտների կիրառման լավագույն փորձառություններից է:

«Մենք ուրախ ենք Google Pay-ը ներկայացնել նաեւ Հայաստանում: Ներկայում այն ավելի քան 45 երկրների օգտատերերի համար Android հեռախոսներով կամ Wear OS սարքերով վճարման արագ, հեշտ եւ անվտանգ միջոց է:»,- ասել է Google Wallet-ի փոխնախագահ եւ գլխավոր տնօրեն Ջենի Չենգը՝ նշելով, որ ծառայությունը ակտիվացնելու համար հարկավոր է ընդամենը հավելվածին կցել վճարային քարտը:

««Կոնվերս» բանկը Google Pay-ի ներդրմամբ ընդլայնում է իր գործիքակազմը եւ անհպում վճարումների հնարավորություն ընձեռում Հայաստանում հասանելի բոլոր եղանակներով: Google Pay-ով գործարքների անվտանգությունը երաշխավորված է ոչ միայն «Կոնվերս մոբայլ» հավելվածի, այլեւ այդ համակարգի բազմաստիճան պաշտպանության համակարգի շնորհիվ:»,- ասել են «Կոնվերս» բանկում:

Google Pay-ը ակտիվացնելու համար անհրաժեշտ է «Կոնվերս մոբայլ» հավելվածում ընտրել քարտը եւ այն մեկ հպումով կցել համակարգին: Վճարումների համար հավելված մուտք գործելու կարիք չկա. բավարար է «արթնացնել» սմարթֆոնը՝ օգտագործելով մատնահետքը, բիոմետրիկ ճանաչումը կամ PIN կոդը, մոտեցնել POS տերմինալին կամ բանկոմատին եւ վճարում կամ կանխիկացում իրականացնել: Մանրամասների համար՝ 010-511-211

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

### Google Pay™-Ը (3) ՀԱՄԱՆԵԼԻ Է

«Ակբա» բանկի հաճախորդներն այսօրվանից կարող են օգտվել Google Pay-ի վճարման պարզ, անվտանգ եւ վստահելի նորարարական գործիքից: Google Pay-ի միջոցով կարելի է գործարք իրականացնել՝ նույնիսկ չունենալով ինտերնետի հասանելիություն:

Բանկի Visa եւ Mastercard քարտապաններն իրենց Android օպերացիոն համակարգով աշխատող սմարթֆոններով եւ ժամացույցներով այսուհետ հնարավորություն ունեն Google Pay-ի միջոցով ամբողջ աշխարհում կատարել անկանխիկ, արագ եւ նորարարական վճարումներ եւ կանխիկացումներ:

Անհպում վճարում կատարելու կամ գումար կանխիկացնելու համար բավական է Android օպերացիոն համակարգով աշխատող սմարթֆոնը կամ ժամացույցը մոտեցնել վճարային տերմինալին կամ բանկոմատին:

Google Pay-ի միջոցով հնարավոր է վճարումներ կատարել նաեւ Google Pay-ի կողմից սպասարկվող օնլայն հարթակներում:

Եթե դեռ «Ակբա» բանկի քարտապան չեք, սակայն ցանկանում եք օգտվել հարմարավետ վճարումներ կատարելու նոր հնարավորությունից, կարող եք դիմել օնլայն՝ բանկի կայքէջի միջոցով, կամ այցելել բանկի ցանկացած մասնաճյուղ: Բանկի թվային քարտ հնարավոր է պատվիրել Acba digital համակարգի միջոցով:

Google Pay-ը Google LLC-ի ապրանքային նշանն է:

Google Pay-ի մասին ավելին իմանալու համար այցելեք այստեղ:

«Ակբա» բանկի մասին ավելին իմանալու համար այցելեք բանկի պաշտոնական կայքէջ:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

● *«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:*

«ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ 2»

# «ԻՆՁ ՀԱՄԱՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԱՐՏՎԵԼ Է»

**Նոյեմբերի 9-ին մեծ էկրան բարձրացավ ռեժիսոր Մհեր Մկրտչյանի՝ «Իշխանություն 2» ֆիլմը: Ռեժիսորի խոսքով՝ ֆիլմը հայրենիքի, սիրո, կորստի, արժանապատվության, խենթերի ու բոլորի մասին է:**



**-Պարո՛ն Մկրտչյան, «Իշխանություն 2» ֆիլմի պրեմիերայից մեկ օր անց մեծ աժիոտաժ սկսվեց հանրության շրջանում, անգամ մի քանի քաղաքացիներ երեկ փորձեցին բողոքի ակցիա իրականացնել ընդդեմ ֆիլմի: Ինչպե՞ս եք վերաբերում կամ արձագանքում այս ակցիաներին:**

-Դուք իրավացի եք՝ մի քանի քաղաքացիների կողմից: Վերաբերմունքս դրական է, ֆիլմի համար դա գովազդ է:

**-Ի՞նչ եք կարծում, այս մարդիկ հատուկ ուղղորդողնե՞ր ունեն, ինչ-որ մեկի կողմի՞ց են ուղարկվել:**

-Ես դրա մասին ոչ մի տեղեկություն չունեմ:

**-Ի՞նչ սպառնալիքներ, վտանգներ եք տեսնում Ձեր անձի նկատմամբ, ինչպես նաեւ դերասանական անձնակազմի հետ կապված:**

-Ես շարունակում եմ ապրել իմ ամենօրյա կյանքով, դերասանները՝ նույնպես:

**-Ձեր ֆիլմը շատերը հարցականի տակ են դնում այն առումով, որ այն նկարահանվել է հատուկ ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսյանին լուսավոր քողի տակ ներկայացնելու համար. ունեցե՞լ եք նման՝ հատուկ միտում:**

-Անիմաստ եմ համարում պատասխանել այս հարցին:

**-Ո՞ւմ ֆինանսավորմամբ է նկարահանվել ֆիլմը:**

-Իմ:

**-Ինչո՞ւ որոշեցիք ֆիլմի երկրորդ մաս նկարահանել:**

-Որովհետեւ պատմությունը անավարտ էր: Նրա մասին էր՝ ինչ է եղել: Ինձ նույնքան կարեւոր է՝ ինչ է լինելու:

**-Պարո՛ն Մկրտչյան, շատերի կարծիքով «Իշխանություն 2» ֆիլմն ունի անորոշ ավարտ: Արդյոք շարունակություն կլինի՞:**

-Ինձ համար այս պատմությունը ավարտվել է:

**-Եվ վերջում՝ ի՞նչ արձագանքներ եք լսել ֆիլմի պրեմիերայից հետո:**

-Ֆիլմի մասին խոսում են, դա ամենակարեւորն է: Վատ է, երբ պրեմիերան անցնում է աննկատ:

Ի դեպ, նշենք, որ ֆիլմում նկարահանվել են Անի Ղազարյանը, Սերգեյ Շակուրովը, Լեւս Դավթյանը, Սիրանուշ Լազյանը, Շանթ Հովհաննիսյանը, Արմինե Անդրեասյանը եւ այլք:

Հիշեցնենք, որ «Իշխանություն» ֆիլմի առաջին մասը մեծ էկրան բարձրացավ 44-օրյա պատերազմին հաջորդող ամիսների ընթացքում: Ֆիլմը հեղափոխության, դրա քաղաքական հետեւանքների ու պատերազմի ավերածությունների մասին է:

«ՍՅՈՒՐՊՐԻԶ» ՍԻԹՔՈՄ

# «ԻՄ ԵՎ ԵՎԱ ՋՈՀՐԱԲՅԱՆԻ ԵՐԱԶԱՆՔԸ»

**Շատ շուտով՝ նոյեմբերի 15-ին, հեռուստադիտողը հնարավորություն կունենա դիտելու բոլորի կողմից այդքան շատ սպասված «Սյուրպրիզ» սիթքոմը: Այն բաղկացած է լինելու ընդամենը 16 սերիայից, իսկ վերջին սերիան նախատեսվում է ցուցադրել Ամանորի գիշերը:**



Այս մասին ArmLur.am-ի հետ զրույցում ասաց դերասանուհի Տիրուհի Հակոբյանը, ով առաջին անգամ է նկարահանվում նման հումորային նախագծում:

Դերասանուհու խոսքով՝ նկարահանումներն անցնում են շատ ջերմ մթնոլորտում. «Հավաքվել է շատ լավ դերասանական անձնակազմ: Անկեղծ ասած՝ այս տեսակ ֆորմատն ինձ համար անծանոթ էր, ես երբեք չեմ խաղացել սիթքոմում, բայց շատ հետաքրքիր էր ինձ համար: Եվ եւս մի բացահայտում անեմ՝ սիթքոմում հանդես է գալիս նաեւ դերասանուհի Եվա Ջոհաբյանը:

Մարմնավորում ենք երկու քույրերի, ինչի մասին ես եւ Եվան դեռ ուսանողական տարիներից միշտ երազել ենք՝ միասին խաղալ, եւ հիմա արդեն դա իրագործվեց, ինչի համար շատ երջանիկ եմ: Կերպարս չեմ ցանկանում բացահայտել, թող անակնկալ լինի հեռուստադիտողի համար»,-նշեց դերասանուհին:

*Նյութերը՝ ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻ*

ԼՈՒՐԵՐ

## ԴԵՌ ՉԻ ՎՃԱՐՎԵԼ

Ֆրանսիայի չեմպիոն ՊՍԺ-ն թիմի 23-ամյա ֆրանսիացի հարձակվող Կիլիան Մբապեին դեռ չի վճարել սեպտեմբերի աշխատավարձը: Աշխարհի չեմպիոն Ֆրանսիայի հավաքականի ֆուտբոլիստը մտադիր է հեռանալ ակումբից, եթե աշխատավարձի ուշացումները լինեն պարբերաբար:

Մբապեին զայրացրել է փաստը, որը արգենտինացի Լիոնել Մեսին ու Նեյմարը այդպիսի խնդիրներ երբեւէ չեն ունեցել փարիզյան ակումբում:

Նոր պայմանագրով Մբապեի տարեկան եկամուտը ՊՍԺ-ում հասնում է 70 միլիոն եվրոյի:

Ընթացիկ մրցաշրջանում Մբապեն ՊՍԺ-ի հետ բոլոր մրցաշարերում մասնակցել է 20 հանդիպման, խփել 19 գոլ, կատարել 5 գոլային փոխանցում:

## «ՖՈՒՏԲՈԼԸ ՇԱՏ Է ՓՈԽՎԵԼ»

Ֆրանսիայի չեմպիոն ՊՍԺ-ի եւ Ամերիկայի գավաթակիր Արգենտինայի հավաքականի 35-ամյա հարձակվող Լիոնել Մեսին խոսել է ժամանակակից ֆուտբոլի առանձնահատկության մասին:

«Ֆուտբոլը շատ է փոխվել: Հիմա ավելի բարդ է գտնել մի ֆուտբոլիստի, որ սովորական չէ: Մանկուց ֆուտբոլիստներին պատրաստում եմ որոշակի մոտեցումներով:

Ֆուտբոլում հիմա մեծ է մարտավարության դերը: Ամեն թիմ կարող է մեծ դժվարություններ ստեղծել մրցակցի համար՝ չունենալով շատ տաղանդավոր խաղացողներ, սակայն մարտավարության շնորհիվ հասնել արդյունքի»,-ասել է Մեսին:

Աշխարհի առաջնության խմբային փուլում Արգենտինայի հավաքականի մրցակիցները կլինեն Լեհաստանը, Մեքսիկան եւ Սաուդյան Արաբիան:

## «ՍԽԱԼ» ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄ

Twitter-ի սեփականատեր Իլոն Մասկն իրեն համարում է «բացարձակ ազատ խոսքի» կողմնակից: Սա, իհարկե, տեսական մակարդակում, իսկ գործնականում Մասկն սկսել է աշխատանքից հեռացնել Twitter-ի այն աշխատակիցներին, որոնք հրապարակավ քննադատում են իրեն իր իսկ սոցցանցում, որը նա վերջերս է ձեռք բերել: Այդ աշխատակիցներին չի փրկում նույնիսկ այն փաստը, որ իրենք ընկերության կարեւորագույն ինժեներներն են:

Ինչպես հայտնում է Bloomberg-ը, ներկայումս հայտնի է երկու նման կրճատումների մասին, որոնցից մեկի մասին հայտնել է անձամբ Մասկը՝ Twitter-ում: «Քննադատության» համար աշխատանքից ազատված մասնագետներից մեկը եղել է Էրիկ Ֆրոնհոֆերը (Eriձ Frohnhoefer), որը ութ տարի աշխատել է Twitter-ի՝ Android օպերացիոն համակարգով աշխատող հավելվածի վրա: Կիրակի նա վերահրապարակել է Մասկի թվիթերյան գրառումներից մեկը՝ մեկնաբանելով, որ Մասկը «սխալ» պատկերացում ունի Twitter-ի հավելվածի տեխնիկական մասի վերաբերյալ:

*● Նոյեմբերի 17-ին Արամ Խաչատրյան համերգասրահում տեղի կունենա համերգ՝ Միխայիլ Պլետնյով եւ Վլադիմիր Ֆեդոսեեւ: Տոմսերի արժեքը՝ 3000-20000 դրամ: Սկիզբը՝ 19:00:*

# ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

## ՏՆՏԵՍԱԿԱՆ

**ՀԱՐՑ. Որո՞նք են անտառաշինության սկզբունքները:**

*Հայկ Ղազարյան (29 տարեկան)*



**ՊԱՏԱՍԽԱՆ.** Անտառաշինությունը անտառների կայուն կառավարման հիմքն է:

Անտառաշինությունն ընդգրկում է՝

-անտառային տնտեսության սահմանների որոշումը.

-տեղագրական աշխատանքների կատարումը եւ անտառների քարտեզագրումը.

-անտառային հողերի գույքագրումը, ներառյալ՝ բնական պայմանների նկարագրությունը, անտառների տեսակային եւ տարիքային կազմի, վիճակի, անտառային ռեսուրսների որակական եւ քանակական բնութագրերը.

-անտառավերականգնման, խնամքի, սանիտարական եւ այլ հատումների, անտառավերականգնման եւ անտառապատման, անտառի պահպանության եւ պաշտպանության, ինչպես նաեւ՝ այլ տնտեսական միջոցառումների կատարման տեղի, կարգի եւ եղանակների սահմանումը՝ հաշվի առնելով անտառների տեսակային կազմը եւ անտառային ճանապարհների առկայությունը.

-անտառներն ըստ նշանակության դասակարգելու հիմնավորումը.

-հաշվարկային հատատեղերի՝ անտառավերականգնման, խնամքի, սանիտարական եւ այլ հատումների ծավալների հաշվարկումը.

-անտառավերականգնման, անտառապատման, անտառների պաշտպանության, պահպանության եւ այլ անտառատնտեսական աշխատանքների ծավալների որոշումը.

-կենսաբանական բազմազանության նկարագիրը, կողմնակի եւ երկրորդական անտառանյութերի, անտառային հողերի օգտագործման հնարավորությունների որոշումը մշակութային, առողջարարական եւ ռեկրեացիոն կարիքների նպատակով:

*ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Անտառաշինությունն իրավական ուժ է ստանում միայն անտառաշինական նախագծերի սահմանված կարգով հաստատվելուց հետո:

*Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ*

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

**ՀԱՐՑ. Որո՞նք են մասնագիտական հիվանդություն եւ աշխատանքային խեղում ստացած, ինչպես նաեւ՝ ժամանակավոր անաշխատունակ դարձած աշխատողի երաշխիքները:**

*Քնարիկ Դովլաթյան (26 տարեկան)*

**ՊԱՏԱՍԽԱՆ.** Մասնագիտական հիվանդության կամ աշխատանքային խեղման պատճառով աշխատունակությունը կորցրած աշխատողի աշխատատեղը եւ պաշտոնը պահպանվում են մինչեւ աշխատունակության վերականգնումը կամ հաշմանդամություն ունեցող անձ ճանաչելը: Աշխատողի աշխատունակությունը չվերականգնվելու եւ հաշմանդամություն ունեցող անձ ճանաչվելու դեպքում գործատուն սույն գլխով նախատեսված հիմքերով կարող է լուծել աշխատանքային պայմանագիրը, եթե առկա է հակացուցման մասին լիազոր մարմնի տված համապատասխան եզրակացություն՝ տվյալ աշխատանքով զբաղվելու վերաբերյալ: Հաշմանդամություն ունեցող անձ ճանաչվելուց հետո աշխատողն իր աշխատանքային պարտականությունների պատշաճ կատարման կամ նույն գործատուի մոտ այլ աշխատանքի անցնելու նպատակով կարող է դիմել գործատուին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով խելամիտ հարմարեցումներ ստանալու նպատակով:

*ՀՀ աշխատանքի*
*եւ սոցիալական հարցերի նախարարություն*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Սույն հոդվածի 1-ին մասով՝ չնախատեսված դեպքերում ժամանակավոր անաշխատունակ դարձած աշխատողները պահպանում են իրենց աշխատատեղը եւ պաշտոնը, եթե նրանք ժամանակավոր անաշխատունակության պատճառով աշխատանքի չեն ներկայացել ոչ ավելի, քան 120 օր անընդմեջ, կամ վերջին տասներկու ամսվա ընթացքում ոչ ավելի, քան 140 օր, եթե օրենքով եւ այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված չէ, որ որոշակի հիվանդությունների դեպքում աշխատատեղը եւ պաշտոնը պահպանվում են ավելի երկար ժամանակով:

## ԼՈՒՐ ԿԱԴՐ

*Լուսանկարը՝ համացանցից*



Աշխարհի ութմիլիարդերորդ մարդը համարվող նորածին Արփին՝ Գեղարքունիքի մարզի Ծովինար գյուղի բնակիչներ Կարեն Զաքարյանի եւ Անի Քոչարյանի դուստրը, ծնվել է 2 կիլոգրամ 900 գրամ քաշով, 49 սանտիմետր հասակով, միանգամայն առողջ վիճակում:


## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:




Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:




*«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*

## ԱՌԱՋԱՐԿ
## հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

**Բաժանորդագրության բլանկ**

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ ____________

*Հեռ.՝(060) 490049*
*0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.*


Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **15.11.2022**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: